

«ՀՈՌՈՎԵԼ» ԲԱՌԻ ՏԱՐԲԵՐ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՆԻԿԻՏ ՄԻՐԶԱՅԱՆՑ

n.mirzayans@gmail.com

Ըստ Կոմիտաս Վարդապետի՝ պատմական եւ աշխարհաքաղաքական պայմաններից ելնելով՝ հայոց գեղջկական բառն ու երգը ունեցել է երկու գլխատր ճիւղ՝ արեւմտեան եւ արեւելեան. առաջինի եղանակները ճոխ եւ եւ լուրջ, պայծառ են եւ եռանդուն, իսկ երկրորդինը սեղմ են եւ պարզ, աղքատ են եւ թեթեւ, դալուկ են եւ խաղաղ՝ Կոմիտասը գեղջուկ երգի տեսակները բաժանում է վեց գլխատր խմբի.- ա) Շինական, բ) Ծիսական, գ) Վիպական՝ վիպերգ, դ) Վիպաքնարական, ե) Խաղեր եւ զ) Անտունի՝:

Այս հրապարակման մէջ նպատակ ունենք ներկայացնել «հորովել» քառի մի նոր ստուգաբանութիւն:

1905ին Կոմիտասը եղել է Վարդաբլուր գիւղում (Լոռու մարզ) եւ գրի է առել Լոռուայ գութաներգը՝ Հոռովելը: «Հոռովել»ները Կոմիտասը ներառել է շինականի գութաներգերի շարքում: Նա գրում է.

...Աստուած փառաբանելն յետոյ՝ սկսում են ծայնով առաւել տալ՝ բուն գութաներգը:

Առաւել են ասում երկու արտի միջոցում պարապ ու անմշակ մնալիք հողին: Այդ բառը, գեղջուկի բերանում, այլեայլ, կամ, նոյնիսկ, միննոյն վայրերում, հնչափոխութեան օրէնքով, այս ձեւերն է առել.

Ա. «Առաւել»ի «ա»ն ընկել է եւ դառել՝ ուռել.

Բ. «Ռաւել»ի «ա»ը սղոնել է ու եղել ոռել.

Գ. «Ռօւել»ի «ե»ը կրճատուել է ու առաջ եկել՝ ոռլ.

եւ Դ. «Ռօլ»ի «լ»ն ընկել է ու դարձել ոռ³...:

եւ իվերջոյ, ըստ Կոմիտասի, դարձել է «հորովել»:

Աճառեանը «հորովելը» այսպէս է մեկնաբանում.

...առաւել (գաառական զանազան ձեւերն են՝ յառաւել, ուռել, ուռալ, ...հորովել,

...հորովուլ, հլովոր, ...հորովօ, հելել), արտի ծայրին անվար մնացած մասը. 2.

Գութանի երգ, որի հին վկայութիւնը գտնում են գործածուած Տաթեւ. ամ. 360

Ձառաւելն որ գլովսն է արտին,

մի՛ հնձեր, այլ աղքատին թող⁴:

Ըստ այս մեկնաբանությունների՝ «առաւելը» կամ «...զլովսն է արտին» կամ երկու արտի միջոցում պարապ ու անմշակ հողամասը, որոնք ոչ մի ուղղակի կապ չունեն գութանի, եզան եւ հողի հերկելու հետ, այլ՝ հողամասին, հունձքին եւ մանաւանդ աղքատին տրուող օգնութեանը:

Պարսկական գիւղական միջավայրում, փոքր հողամասի տէր գեղջուկը, չունենալով եզ ու գոմէշ, վարուցանքի համար օգտուում էր խոփից ու թոկից, այնպէս որ մէկը թոկն էր քաշում, իսկ միւսը խոփն էր խրում հողի մէջ՝ հերկելու նպատակով: Պարսկերէն այս գործողութեան ասում էին «հոլ-օ-վել», այսինքն՝ «հիրի ու ազատիր»: Ժամանակի ընթացքում գեղջուկի մօտ

այս գործողությունը աշխատանքային երգի է վերածել, եւ, կարծում ենք, եզի ու գոմէշի անելանալն էլ չի խանգարել հայ գիւղացին հողը հերկելիս կատարի այս գութաներգը: Պարզ է՝ հնչափոխութեան օրէնքով «հոլ-օ-վել»ի «լ»ն դարձել է «ո», այսինքն՝ «հոռ-օ-վել»: Աճառեանի գաւառական բառերի ցանկում կայ «հլովոր» ձեւը, որը շատ մօտ է «հոլովել»ին: Իդէպ, Իրանի Իսպահան նահանգի հայաբնակ Չարմահալ գիւղում ասում էին «հոլա անել», որ նշանակում է՝ ոտքերով կոխել, պարսկերէն՝ հրել:

Մենք այս վարկածը որպէս բացարձակ ճշմարտութիւն ներկայացնելու միտում չունենք, բայց, կարծում ենք, այս մեկնաբանությունը կարող է նոր բացայայտումների ուղիներ նշել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Կոմիդաս Վարդապետ, Ոսումնասիրութիւններ եւ Յօդածներ, Հրդ. Ա., աշխատ.՝ Գուրգէն Գասպարեան եւ Մարինէ Մուշեղեան, Երեւան, Սարգիս Խաչենց, 2005, էջ 330:
- ² Նոյն, էջ 331:
- ³ Նոյն, Կոմիդաս Վարդապետ, Ոսումնասիրութիւններ եւ Յօդածներ, Հրդ. Բ., աշխատ.՝ Գուրգէն Գասպարեան եւ Մարինէ Մուշեղեան, Երեւան, Սարգիս Խաչենց, 2007, էջ 93:
- ⁴ Հր. Աճառեան, Հայերէն Արմաւրական Բառարան, Հրդ. 1, ԵՊՀ Հրատ., 1971, էջ 358:

A DIFFERENT EXPLANATION OF THE WORD "HOROVEL"

(Summary)

NIKIT MIRZAYANTS

n.mirzayants@gmail.com

After categorizing Armenian rural songs (*Keghchug yerker*) into six major groups, Gomidas placed the renowned *horovel* (*kutanerk*, plough songs) in the boorish category. Gomidas wrote down the Lori *horovel* in 1905 in the village of Vartaplar.

However, the explanation of the word *horovel* has been a bone of contention.

Gomidas explained it as a corruption of the word *aravel*, which in this context meant the border area the peasant did not plough and left to the poor. Adjarian, by and large, gave a similar explanation, referring to an old source.

The author, however, challenges these explanations as they have no connection either with the land, or with the plough or the very act of ploughing. He argues that in rural Persia the peasant who did not own an ox replaced the ox with human manual labor: one person would hold the plough deep in the soil, while the other would pull the rope attached to it. This act was called *hol-o-vel* in Persian, i.e. "push and free it". The author hypothesizes that in time this manual labor was reshaped into a labor song, and the inclusion of the ox in the case of the Armenian peasant did not lead to changing the name of this act. Eventually the term was corrupted to *horovel*. The author refers to the word *hlovor* in one of the Armenian dialects, which comes very close to *horovel*. Moreover, he states that Armenian villagers of Charmahal in the district of Isfahan used the word *hola anel*, which meant to tread with the feet and push in Persian.